«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ երկարօրյա պարապմունքների ազդեցությունը սովորողների մոտիվացիայի վրա

Հետազոտող ուսուցիչ՝ Էլլա Բազոյան

անուն, ազգանուն

Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նորապատի միջնակարգ դպրոց

դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Շուշան Վարդանյան

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2023

Բովանդակություն

Նախաբան----------3

Գրական ակնարկ----------4

Գործնական համատեքստ----------7

Տվյալների մշակում և վերլուծություն----------9

Ամփոփում----------11

Գրականության ցանկ----------12

Նախաբան

<<Շախմատում զինվորը միակ խաղացողն է ,որն ունի նպատակ և կարող է դառնալ այն ինչ ցանկանում է **>>:**

Յուրաքանչյուր ուսուցիչ գոնե մեկ անգամ իրեն տվել է այն հարցը, թե ինչու է աշակերտի մոտ ժամանանակի ընթացքում անկում ապրում սովորելու ցանկությունը՝ մոտիվացիան:

Մոտիվացիան ներքին գործընթաց է, որը տեղի է ունենում մարդու մեջ, երբ նա ազդակ կամ կարիք է զգում: Դա պայման է, որը տեղի է ունենում մարդկանց մեջ, երբ նրանք ցանկանում են շրջակա միջավայրի փոփոխություն կամ անձնական փոփոխություն առաջացնել: Մոտիվացիան մարդկանց տալիս է այն էներգիան, որն անհրաժեշտ է գործելու և իրենց նպատակներին հասնելու համար անհրաժեշտ խնդիրները լուծելու համար: Մոտիվացիայի տարբեր տեսակներ կան, որոնցից մեկը ուսումնական մոտիվացիան է : Ոսումնական մոտիվացիան դա գործընթաց է , որն ուղղորդում և խրախուսում է ուսումնական պրոցեսի հաջողված ընթացքը:

Բոլոր երեխաները դպրոց գնալիս բավականին մոտիվացված են , և ինչ ինչ պատճառներով երեխան, որը գենետիկորեն նախատրամադրված է սովորելուն , ժամանակի ընթացքում դասապրոցեսը նրա համար դառնում է դժվար ու ձանձրալի :

Ցավոք չկա մի այնպիսի կախարդական հնարք, որի միջոցով հնարավոր լինի բարձրացնել աշակերտի սովորելու ցանկությունը, զարգացնել ինքնակրթվելու մշակույթը: Ուսման պրոցեսում դժվար է կողմնորոշվել թե ինչպես մոտիվացնել աշակերտներին, քանի որ այն անմիջական կապ ունի տարբեր հոգեբանական իրավիճակների հետ:

Կան բազմաթիվ մեթոդներ և հնարքներ , որոնց միջոցով կարելի է մոտիվացնել աշակերտներին՝ նպաստելով ինքնակրթվելու ,կարողությունների և հմտությունների զարգացման համար պայքարելու ցանկության բարձրացմանը: Սովորողի մոտիվացված լինելուց կախված է նրա հետագա կրթական մակարդակի

բարելավման գործընթացը: Ուսումնական պրոցեսում սովորողի մոտիվացիան բաղկացած է հետևյալ հիմնական կետերից՝

- Սովորողի դրական տրամադրվածություն դեպի ուսումնառություն
- Հստակ նպատակ,որին պետք է ձգտի սովորողը
- Նպատակին հասնելու դրդապատճառները
- Նպատակասլացություն

Ներկայումս ես գտնում եմ , որ երբեմն որոշակի սովորողների համար հանրակրթական դպրոցում մաթեմատիկայի դասավանդման համար հատկացված ժամերը բավարար չեն դպրոցական ծրագրային նյութը ամբողջությամբ յուրացնելու համար: Դա վերաբերվում է ոչ միայն հանրակրթական , այլև մաթեմատիկայի խորացված ուսուցմամբ դասարաններին, որտեղ այդ առարկայի ուսուցումը բարձր մակարդակի վրա է : Այդ պարագայում՝ հատկապես սովորողների այն խմբի համար, որոնց մոտ անկում է ապրում մոտիվացիայի զգացողությունը , անհրաժեշտություն է առաջանում ուսուցման անհատականացումը, որի ձևերից մեկն էլ արտադասարանային աշխատանքներն են ,որոնց տեսակներից է երկարօրյա պարապմունքները :

Մաթեմատիկան այն հիմնական առարկաներից է, որը զարգացնում է տրամաբանական մտածողություն, հետևաբար շատ կարևոր է նրա դերը ուսումնադաստիարակչական գործընթացում: Սովորողների մոտ մաթեմատիկական գիտելիքները խորացնելու լավագույն միջոց են ոչ միայն մաթեմատիկայի դասերը, այլև լավ կազմակերպված երկարօրյա պարապմունքները:

Երկարօրյա պարապմունքները լինում են երկու տեսակի.

- աշխատանք հետ մնացող աշակերտների հետ:
- աշխատանք այն սովորողների հետ, որոնք մյուսների համեմատ առավել մոտիվացված են և ուսումնասիրվող առարկայի նկատմամբ մեծ հետաքրքրություններ են դրսևորում(ծնողի դիմումի համաձայն՝ վճարովի հիմունքներով):

Առավել ուշադրությանն է արժանի առաջին կետը, քանի որ ես գտնում եմ, որ այն ամենաարդյունավետ միջոցներից է երեխայի մոտ առարկայի հանդեպ հետաքրքրությունը մեցածնելու համար, քանզի մյուս խումբը ինքստինքյան հետաքրքրված է :

Ըստ հանրակրթության նոր չափորոշիչների, եթե սովորողը պարբերաբար ստանում է անբավարար գնահատական կամ համապատասխան ձևով բնութագրվում է, ապա ուսուցիչը ներկայացնում է սովորողին՝ երկարօրյա պարապմունքներին ներառելու նպատակով :

Խնդիրները

Ուսումնական գործընթացում սովորողի մոտ մոտիվացիայի ձևավորման խնդիրներն են՝

- անհատի զարգացման և ինքնակրթությամբ զբաղվելու կարողունակության խթանումը
- զարգացնել սովորողի մոտ ինքնուրույնություն, ինքնաճանաչման, ինքնագնահատման գործունեությունը՝ ազատ մտքեր արտահայտելու պայմաններում
- սեր արթնացնելը սովորողների որոշակի քանակի մեջ մաթեմատիկայի նկատմամբ:

Նպատակները

- Հետազոտության նպատակն է զարգացնել յուրաքանչյուր սովորողի մեջ անհատ
- Մշակել մեթոդական համակարգ, որը կբարձրացնի երկարօրյա պարապմունքների արդյունավետությունը :

Երկարօրյա պարապմունքները սովորողների մոտիվացիան բարձրացնելու հետ մեկտեղ նաև ունեն իրենց օգտակար ազդեցությունը ուսուցչի նկատմամբ: Պարամունքները հաջողված լինելու համար անհրաժեշտ է , որ ուսուցիչը անընդհատ զարգացնի հմտությունները, տիրապետի բազմաթիվ մեթոդների ու հնարքների՝ վերջնարդյունքներին հասնելու համար: Բոլոր դրական ազդեցություններից բացի երկարօրյայի գաղափարը ունի նաև բացասական գործոն, որի համաձայն աշակերտները սովորություն կդարձնեն դասերի ուշադիր չլինելու երևույթը, վստահ լինելով, որ դասից հետո կմնան և նորից կբացատրվի ուսումնական նյութը:

Երկարօրյա պարապմունքներին են պատկանում ուսուցման և դաստիարակության բազմազան ձևեր, որոնց թվին չեն պատկանում տնային առաջադրանքների կատարումը:

Երկարօրյա պարապմունքների ժամանակ սովորողին գնահատման ոչ մի տեսակ չի օգտագործվում: Պարապմունքները պետք է ընթանան համերաշխ ոչ պարտադրող մթնոլորտում: Այդ մթնոլորտը ապահովելու և արդյունավետ վերջնարդյունք ստանալու համար անհրաժեշտ է , որ ուսուցիչը տիրապետի բավականին մեծ մաթեմատիկական գիտելիքների, հնարքների և ունենա մանկավարժական տակտի զգացողության:

Ստորև ներկայացնում եմ այն հետազոտության ընթացքը, որը կատարել եմ դասարանի թույլ սովորողների խմբի համար՝ նրանց մոտիվացիան բարձրացնելու նպատակով, և՝ որպես ազդող գործոն, ընտրել եմ երկարօրյա պարապմուքները: Ես գտնում եմ, որ երկարօրյա պարապմունքները մոտիվացիայի դրական գործոններն ավելացնելու միջոցներից մեկն է:

Հետազոտության ընթացքը

Հետազոտություն կատարելու համար ընտրվել է դասավանդվող դասարաններից մեկը՝ 6-րդ դասարանը, որտեղ սովորում են 24 աշակերտ, որոնցից շատ քչերն են մոտիվացված և մեծ ոգևորվածությամբ մասնակցում դասապրոցեսին, որի մասին վկայում են նրանց թեմատիկ գրավոր աշխատանքների գնահատականները: Թեմատիկ գրավոր աշխատանքի արդյունքում ովորողներից 10 միավորային համակարգում 5 հոգին գնահատվել են է 7-9 միավորով , 12 հոգի գնահատվել է 4-6 միավորով , և 7 հոգին գնահատվել է անբավարար: Նաև 4 է ստացել է դասարանի սովորողներից մեկ աշակերտ, որն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք :Հետազոտության համար դասարանից ընտրվել են 10 աշակերտ որոնք դասարանի մյուս աշակերտների համեմատ շատ թույլ են և ոչ մոտիվացված:

Հետազոտական առաջին դասին դասալսման էր հրավիրված մեթոդմիավորման նախագահը, ով պետք է հետևեր իմ կողմից ընտրված աշակերտների դրսևորմանը դասի ընթացքում, այսինքն որքանով էին նրանք հետաքրքրված դասով, նրանց մոտիվացիան ինչ մակարդակի է: Դասի ընթացքում նշված աշակերտենը շատ պասիվ էին, ոմանք գրիչով խաղում էին, ոմանք՝քնում էին սեղանին, ոմանք անտարբեր հայացքով ուղակի նայում գրատախտակին անհամբեր սպասելով զանգի հնչելուն: Դասի ավարտից հետո նրանց տրվեց առաջադրանքների վերաբերյալ հարցաթերթիկներ ,որոնք բաղկացած էին հետևյալ 4 հարցից

1.Հասկացել է արդյոք դասը և կարող է բացատրել

2. Ցանկանում է նորից քննարկել

3.Հետաքրքիր էր դասը

4.Չի հասկացել , բայց չի ցանկանում քննարկել:

Դասերի ավարտից հետո կատարվեց երկարօրյա մեկ ժամանոց պարապմունք, որի ընթացքում մանրակրկիտ և բավականին պարզեցված կերպով բացատրվեց

սովորողներին տվյալ օրվա թեման, բերվեց բազմաթիվ օրինակներ առօրյա կյանքից , որտեղ անհրաժեշտ կլինեն նրանց գիտելիքները, պարապմունքի ընթացքում զգացվում էր նրանցից միքանիսի մոտ մեծ ոգևորվածություն, ինչը վկայում էր այն մասին , որ սովորողը հասկացել է դասը , թեկուզ ոչ ամբողջությամբ: Որոշ աշակերտներ, այնքան էին ոգևորվել դասերից հետո մնալու գաղափարով , որ բարձրաայնում էին, թե սրանից հետո վատ կսովորեն, որ ուսուցիչը մնա իրենց հետ դասերից հետո: Իհարկե նրանց բացատրվեց , որ դա արվում է նրա համար , որ դասերի ժամանակ սկսեն ավելի լավ սովորել և ուշադիր լինել:

Սեպտեմբերի 26-ին կատարվեց հետազոտական երկրորդ դասը, որին նորից ներկա էր մեթոդմիավորման նախագան և արձանագրում էր սովորողների մոտիվացիայի մակարդակը: Դասի ընթացքում բավականանին մեծ հետաքրքրվածություն էին ցուցաբերում նշված աշակերտներից մեծ մասը ,քանի որ որոշ չափով հասկանում էին և հետաքրքիր էր իրենց համար, նույնիսկ հարցեր էին տալիս , առաջարկներ էին կատարում դասի վերաբերյալ: Դասի ավարտին ,ինչպես առաջին դասից հետո , սովորողները լրացրեցին միևնույն հարցերից բաղկացած հարցաթերթիկները: Հաջորդ օրը աշակերտները նորից մնացին երկարօրյա պարապմունքներին, որի ընթացքում բացատրվեց օրվա թեման, նորից լուծեցին պարզ վարժություններ , սկզբում օրինակի հիման վրա, այնուհետև ինքնուրույն: Հոկտեմբերի 3-ին կատարվեց հետազոտական 3րդ՝ վերջին դասը, որի ավարտից հետո նորից աշակերտները լրացրեցին նույն հարցերից բաղկացած հարցաթերթիկները: Հարցաթերթիկների պատասխանների հիման վրա կազմվել սյունյակային դիագրամ, ըստ որի շատ ավելի տեսանելի է երկարօրյա պարապմունքների դրական ազդեցությունը երեխաների մոտիվացված լինելու վրա:

Աշակերտի հարցաթերթ 1

Ամիս, ամսաթիվ 22.09.2023թ

Հարց սովորողին	*Առաջադրանքների քանակ*
Հասկացել եմ, կարող եմ բացատրել	2
Ցանկանում են նորից քննարկել	5
Հետաքրքիր էր	3
Չեմ ցանկանում քննարկել	8

Առաջարկներ ----------

Աշակերտի հարցաթերթ 2

Ամիս, ամսաթիվ 26.09.2023թ

Հարց սովորողին	*Աշակերտների քանակ*
Հասկացել եմ, կարող եմ բացատրել	4
Ցանկանում են նորից քննարկել	6
Հետաքրքիր էր	5
Չեմ ցանկանում քննարկել	5

Առաջարկներ՝ աշակերտները առաջարկեցին նորից հանդիպել դասերից հետո, և կցանկանային հաճախակի կատարել նման պարապմունքներ

Աշակերտի հարցաթերթ 3

Ամիս, ամսաթիվ 03.10.2023թ

Հարց սովորողին	*Աշակերտների քանակ*
Հասկացել եմ, կարող եմ բացատրել	6
Ցանկանում են նորից քննարկել	4
Հետաքրքիր էր	8

Չեմ ցանկանում քննարկել	3



Ամփոփում

Ուսումնասիրելով վերը նշված բոլոր կետերը՝ կարելի է եզրակացնել, որ երկարօրյա պարապմունքների կազմակերպումը և իրականացումը բազմատեսանկյուն հիմնախնդիր է , որի լուծումը պահանջում է

- Հաշվի առնելով սովորողի տարիքային և անհատական առանձնահատ-կությունները՝ մոտիվացնել նրան:
- Բացահայտել սովորողի ընդունակությունները և ապահովել նրա հետագա զարգացումը, բացահայտել նրա մետաիմացությունը:
- Կարևորել թույլ առաջադիմություն ունեցող երեխաների ներգրավվումը երկարօրյա պարապմունքներին

Ավարտելով աշխատանքս՝ ասեմ, որ վերը նկարագրված հետազոտության ընթացքում ինձ պարզ դարձավ, որ դասարաններում կան աշակերտների մի խումբ, որոնք շատ ավելի դանդաղ են ընկալում այն ամենը ինչ մենք նրանց բացատրում ենք, նրանց հետ անհրաժեշտ է հավելյալ աշխատանք կատարել, որպեսզի նրանց համար ընկալելի լինի դասը և հետաքրքիր, այլ կերպ մենք դառնում են նրանց համար սև-սպիտակ անձայն կինոնկարի նման, որտեղ նրանք տեսնում են մեր բերանի շարժումը, բայց ոչինչ չեն հասկանում և ամենաշատը 10 րոպեից ձանձրանում և ձգտում են “ալիքը” փոխել, հետևաբար շատ անհրաժեշտ է , որ մենք լինենք նրանց համար գունավոր և հասկանալի ,որպեսզի ցանկանան շարունակությունը տեսնել և լսել, ինչի հնարավորությունը մեզ տալիս է երկարօրյա պարապմունքները:

Գրականության ցանկ՝

https://infourok.ru/issledovatelskaya-rabota-na-temu-izuchenie-sposobov-motivacii-podrostkov-v-shkolnom-obuchenii-869464.html

https://kopilkaurokov.ru/logopediya/prochee/motivatsiia_k_vneurochnoi_deiatelnosti_v_usloviiakh_realizatsii_fgos

Հ.Ս.Նավասարդյան, Մաթեմատիկայի արտադասարանային աշխատանքները որպես սովորողների մտավոր մշակույթի ձևավորման մեթոդ, Մանկավարժական միտք, 2017, 1-2, էջ 53-57: